ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 55-Ն

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 22.12.2016Թ. ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 22.12.2016թ. հերթական նիստի օրակարգը.

1. *Ծաղկահովիտ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հաստատում:*
2. *Ծաղկահովիտ համայնքապետարանի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:*

Կողմ -5 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

1. *ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ*
2. *ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ*
3. *ԲԵՍԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ*
4. *ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ*
5. *ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍՏԱԼ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 56-Ն

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարավելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Ծաղկահովիտ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Կողմ -5 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

3. ԲԵՍԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

5. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Նորաին Հակոբյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2016թ-ի թիվ 56-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկություններ համայնքի մասին

Ծաղկահովիտ գյուղը **(հնում Հաջիխալիլ)** ՀՀ Արագածոտն մարզի Արագածի տարածաշրջանի կենտրոնն է: Այն գտնվում է Ալագյազ-Արթիկ միջհանրապետական նշանակության ճանապարհի ձախ կողմում և ծովի մակարդակից գտնվում է 2175 մ բարձրության վրա:

Ծաղկահովիտը եղել է բարեկարգ բնակավայր,Արագածի վարչական շրջանի կենտրոն: Համայնքում ժամանակին գործել են տրիկոտաժի ֆաբրիկա,մի քանի կենցաղ սպասարկման կենտրոններ,սակայն դրանք արդեն 20-ից ավելի տարի է դադարեցրել են իրենց գործունեությունը:

Նախորդ տարիներին համայնքում իրականացվել են մի քանի պետական ծրագրեր՝ վերակառուցվել է 3 բազմաբնակարան շենք,անցկացվել է խմելու ջրի ցանց:

2.Ժողովրդագրություն

Գյուղն ունի 646 ընտանիք,2146 բնակչով,որից 1164-ը տղամարդ, իսկ 982-ը՝ կին: Նրանց մեծ մասը բնակվում են անհատական տներում: Գյուղում կան 16 բարձրահարկ բազմաբնակարան շենքեր,որոնք զգալի տուժել են երկրաշարժից և դարձել վթարային: 5-րդ շենքի բնակարանները (40) անցած տարի,վերանորոգումից հետո, բաժանվել են գյուղի բնակիչներին:

Գյուղից շատ են արտագնա աշխատանքի մեկնողները: Աշխատանքի բացակայության պատճառով նրանք գարնանը գնում են գյուղից և վերադառնում միայն ձմռանը: Որոշ ընտանիքներ էլ վերաբնակվել են արտասահմանում՝ հիմնականում ՌԴ-ում: Գյուղում շատ են անապահով ընտանիքները: Գյուղատնտեսությունից ստացվող եկամուտները քիչ են և հազիվ են բավարարում նրանց պահանջները: <<Փարոս>> համակարգում գրանցված են 65 ընտանիք,կան նաև 70 գործազուրկ ընտանիքներ:

3.Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման մարմինը ձևավորվել է ՀՀ Սահմանադրության և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն:

Համայնքապետը ձևավորել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

1.Աշխատակազմի ղեկավար

2.Առաջատար և կրտսեր մասնագետներ

3.Սպասարկող աշխատակազմ

4.Գրադարան

5.Մշակույթի տուն

6.Կոմունալ ծառայություն

7.Մանկապարտեզ

4. Կրթություն

Ծաղկահովիտ համայնքում գործում է մեկ դպրոց՝ 1140 աշակերտների համար,բայց դպրոցում սովորում են 220 աշակերտ,դասավանդում են 32 մանկավարժ: Վերջին տարում ՀՀ ԲՈՒՀ-եր են ընդունվել 19 երիտասարդներ: Դպրոցը զգալիորեն տուժել է երկրաշարժի ժամանակ, մեկ անգամ վերանորոգվել է, սակայն ունի կապիտալ վերանորոգման կարիք:2013թ-ին անցկացվել է լոկալ ջեռուցում,որը գործում է նորմալ:Հիմնանորոգվել է մարզադահլիճը:

5. Հողատարածքների օգտագործում և գյուղատնտեսություն

Համայնքի հողատարածությունները կազմում են 4651 հեկտար, որից գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում են 1250 հեկտարը: Սեփականաշնորհված է 565 հեկտարը, սեփականաշնորհումից օգտվել են 275 ընտանիք,մեկ հողաբաժնի չափը կազմում է 1.2 հեկտար:Ոռոգման ցանցում ջրի մեծ կորուստների պատճառով ցանքերի մեծ մասը ընդհանրապես չի ոռոգվում և դրանց արդյունավետությունը խիստ ցածր է:

Գյուղացիական տնտեսություններում պահվում է 1700 գլուխ եղջերավոր անասուններ,որից 900-ը կովեր են,800՝ ոչխարներ: կա նաև 1300 թև թռչուն:

Համայնքում կա բավական քանակությամբ գյուղտեխնիկա՝ ԴՏ և ՄՏԶ մակնիշի տրակտոր,13 բեռնատար ավտոմեքենա: Սակայնտեխնիկան հնացած է,պահեստամասերն էլ շատ դեպքերում չեն ճարվում,որի հետևանքով էլ համայնքում զբաղվածությունը ցածր մակարդակի վրա է:

6. Առողջապահություն և շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքում գործում է մեկ առողջապահական կենտրոն՝ 20 մահճակալ տեղով,որը բուժօգնություն է կատարում ողջ տարածաշրջանի համար: Կենտրոնում աշխատում են 17 բժիշկներ և 75 միջին և կրտսեր բուժաշխատողներ: Կենտրոնի շենքը ունի կապիտալ վերանորոգման կարիք,գույքը հին է և ներկայիս պայմաններին չի բավարարում: Բացակայում է կենտրոնացված ջեռուցումը,որի պատճառով հիվանդասենյակներն ու աշխատասենյակները ջեռուցվում են էլեկտրական տաքացուցիչներով,որի հետևանքով շատ է էլեկտրաէներգիայի ծախսը,որն էլ

ժամանակին չի մարվում: Նորմալ պայմանների բացակայության պատճառով թերապեվտիք բաժանմունքի հիվանդները խուսափում են հիվանդանոցում պարկելուց: Համեմատաբար ծանրաբեռնված է վիրաբուժական բաժանմունքը,սակայն սարքավորումների բացակայության ու ոչ նպաստավոր պայմանների պատճառով շատերը մեկնում են այլ բուժհիմնարկներ: Կենտրոնն ունի 3 շտաբօգնության մեքենա:

Գյուղի սանիտարական պայմանները անբավարար է,գյուղում չկա աղբատար մեքենա և արկղեր: Սակայն համայնքի ուժերով կատարվում են շաբաթօրյակներ:

7. Կոմունալ տնտեսություն և կենցաղ սպասարկում

Համայնքը ժամանակին ունեցել է հզոր կոմունալ տնտեսություն,կենցաղ սպասարկման կաբինետ իր օբյեկտներով: Կոմունալ տնտեսությունը գտնվում է վատթար վիճակում,դադարել է գործելուց կենտրոնական ջեռուցման համակարգը,խմելու ջրագծերը վերանորոգման կարիք ունեն,շատ հատվածներ գրեթե ամբողջությամբ շարքից դուրս են եկել: Գյուղի խմելու ջրագիծը ունի 28 կմ երկարություն,դրանից 14 կմ վերանորոգման կարիք ունի,քանի որ 30 տարիների ընթացքում վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Որոշ թաղամասերում բնակիչներն օգտվում են ընդհանուր ծորակներից,որոնք հաճախակի խափանվում են: Չնայած բնակավայրը գազաֆիկացված է, սակայն գյուղի հարավ-արևմտյան թաղամասում գազի գծեր չկան: Գյուղամիջյան ճանապարհների երկարությունը կազմում է 24 կմ,որից 20 կմ գրունտային ճանապարհներ են:

8. Ենթակառուցվածքներ

Համայնքի ենթակայության ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 36 կմ է,սակայն չի գործում:

9.Տնտեսություն

Ժամանակին համայնքը ունեցել է հզոր տնտեսություն,սակայն հանրապետության տնտեսական ճգնաժամի հետևանքով գյուղը նույնպես տնտեսական անկում ապրեց: Տրիկոտաժի ֆաբրիկայի պարապուրդի պատճառով աշխատանքից զրկվել է 120 մարդ: Շատ մարդիկ աշխատանքից զրկվեցին կոմունալ և կենցաղային օբյեկտների գործունեության հետևանքով: Համայնքի բնակչության եկամուտները հիմնականում ստացվում են արտադրված գյուղմթերքից: Դրանցից փոխանակման կամ վաճառքի կարգով իրացվում են 15-20%-ը, մնացածը իրացվում է սեփական կարիքների համար կամ կուտակվում է:

Համայնքում կա 14 առևտրի կետեր:

10. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը

Համայնքի սեփականության գույքի ցուցակը սահմանվել է ՀՀ Կառավարության կողմից: Վերջին տարիներին համայնքապետարանի գույքը չի նորացվել և դարձել է օգտագործման համար ոչ պիտանի: Վերանորոգման ենթակա են ներհամայնքային,դաշտամիջյան ճանապարհները,խմելու և ոռոգման ջրագծերը:

Համայնքի սեփականության գույքի ցուցակ և վիճակ

- Գյուղապետարանի շենք 1 հատ 4 հարկանի՝ ունի վերանորոգման կարիք
- Խմելու ջրի ներքին ցանց 36 կմ՝ ենթակա է կապիտալ նորոգման
- Ոռոգման ներքին ցանց 36 կմ,որից 26 կմ վթարային վիճակում է
- Մշակույթի տուն՝ ունի վերանորոգման կարիք
- Գյուղամիջյան ճանապարհներ 28 կմ՝ ունի ասֆալտապատման կարիք
- Ժամանակավոր փայտյա տնակ 17 հատ՝ շարքից դուրս են եկել:

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի տարեկան բյուջեն կազմում է շուրջ 60 մլն ՀՀ դրամ, որից միայն 35,5 % են սեփական եկամուտներ:

Համայնքում զործում է պանրի և հացի արտադրամաս: Արտադրվում է պանրի տարբեր տեսակների, որն առաքվում է հանրապետության տարբեր խանութներ, ունի մեծ պահանջարկ,իսկ հացը հիմնականում սպառվում է տեղում:

Համայնքում կա <<Արմենթել>>-ի, <<Վիվա Սել>>-ի, <<Յուքոմ>>-ի սպասարկման զրասենյակ,ինչպես նաև <<ՎՏԲ- Հայաստան Բանկ>>-ի և <<ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ>> բանկի մասնաճյուղեր:

Համայնքի տարածքում գյուղացիների կողմից արտադրվում է զարի, ցորեն, տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, ոչխարի բուրդ և տավարի կաշի:

Գարու պաշարի մի մասը բնակչությունը պահում է հաջորդ տարվա ցանկի համար, մի մասը աղում են անասունների խտացրած կերերի համար,որոշ մասն էլ վաճառում են:

Ցորենի պաշարի մի մասը պահում են հաջորդ տարվա ցանկի համար,մի մասը ալյուր են անում,մնացացն էլ վաճառում են:

Տավարի միսը հիմնականում սպառվում է տեղական շուկայում,որոշ մասն էլ շրջակա գյուղերում: Նույնը վերաբերում է խոզի և ոչխարի մսին:

Իսկ ոչխարի բուրդը հիմնականում չի սպառվում՝ շուկա չունենալու պատճառով:

Տավարի կաշին շուկայականից ցածր գներով վաճառում են մսավաճառներին:

Գյուղի տարածքում կան պատմամշակութային հուշարձաններ, կատարվել են պեղումներ, հայտնաբերվել են բերդաքաղաքներ, գերեզմանոցներ, հնառճ իրեր: Վայրերից մեկը կոչվում է Կալաչի,գտնվում է գյուղի արևելյան մասում: Գյուղի տարածքում կա կիսաքանդ եկեղեցի և մատուռ: Մատուռի անունը Սուրբ Ճգնավոր է:

Գյուղում զործում է միջնակարգ դպրոց,մանկապարտեզ,գործում է պարի խմբակ:

Գյուղում զործում է Ծաղկահովիտի բժշկական կենտրոնը և Հակահամաճարակային կենտրոնը, որոնք սպասարկում են Արագածի տարածաշրջանը:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 58 ընտանիք:

Գյուղի աշխատունակ բնակչության 80-90 %-ը գործազուրկ են: Հիմնական եկամտի աղբյուր համարվում է արտագնա աշխատանքը՝ հիմնականում ՌԴ:

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ չկան:

Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր չկան:

Միջազգային և տեղական կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրեր և միջոցառումներ չկան:

Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից սպասում ենք ներդրումներ՝ Ծաղկահովիտի բժշկական կենտրոնը վերանորոգելու և տեխնիկապես վերազինելու համար:

Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ չկան:

Համայնքի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համանյքի բյուջեն է,այլ ֆինանսավորման աղբյուրներ չկան: Համայնքի տարածքում մյուս ֆինանսական միջոցներն ստացվում են արտասահմանից՝ տրանսֆերտների տեսքով, արտագնա աշխատանքի մեկնածների կողմից,որն էլ օգտագործվում են իրենց ընտանիքների խնդիրների լուծման համար:

Արդեն վերը նշել եմ, որ համայնքի բյուջեն կազմում է մոտ 60 մլն ՀՀ դրամ,որից 35.5%-ը սեփական աղբյուրներից ստացվող եկամուտն է,իսկ մյուսը՝ պատական գանձարանից համահարթեցման համար տրվող դոտացիան:

Համայնքի բյուջեի մոտ 30%-ը ծախսվում է մանկապարտեզի և կոմունալ ծառայության հարցերով,մոտ 50%-ը ապարատի,գրադարանի և մշակույթի տան աշխատավարձերի վրա,իսկ մնացածն էլ ծախսվում է գյուղի առօրյա խնդիրների համար(համայնքի տարածքում անցկացվել է փողոցների լուսավորություն,ցանկապատել են գյուղի գերեզմանոցը, կատարվել են փոսալցման աշխատանքներ):

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն են՝ ֆինանսական միջոցների բացակայությունը,եղանակային պայմանները, խոշոր քաղաքներից և գլխավոր ճանապարհներից հեռու գտնվելը: Չնայած այս ամենին համայնքն ունի այն ներուժն ու միջոցները,որ հիմնվեն նոր արտադրամասեր ու բացվեն աշխատատեղեր:Ուղղակի անհրաժեշտ է պետության միջամտությունն ու օգնությունը:

Համայնքի գույքի կառավարումն իրականացվում է համայնքի գեկավարի և ավագանու կողմից: Գյուղում նախկինում գործել է <<Արագած>> կինոթատրոնը, կա մշակույթի տուն

որոնք հիմա ֆիզիկապես մաշված վիճակում են գտնվում,ունեն կապիտալ վերանորոգման կարիք:

Համայնքի միջնակարգ դպրոցում կազմակերպվում է կրթական գործընթացը: Դպրոցի շենքում գործում է մանկապարտեզը: Արտադպրոցական դաստիարակության համար գյուղում գործում է <<Արագած>> պարային համույթը:

2015թ-ին հիմնանորոգվել է դպրոցի մարզադահլիճը:

Այսինքն բոլոր պայմաններն ունենք առողջ սերունդ մեծացնելու համար:

Համայնքի մշակույթային կյանքը կենտրոնացված է միայն դպրոցի և մանկապարտեզի վրա, որտեղ էլ կազմակերպվում և իրականացվում են բոլոր միջոցառումները:

Իհարկե,համայնքապետարանն էլ իր հերթին է օգնում և ֆինանսավորում որոշ միջոցառումներ:

Վերը նշեցի,որ համայնքի աշխատունակ բնակչության 80-90%-ը անգործ են,հիմնական աշխատանք փնտրում են արտասահմանում՝ մասնավորապես ՌԴ-ում: Ուստի ելնելով այս ամենից,կարող ենք ասել,որ բնակչությունը սոցիալապես խոցելի է: Համայնքի բյուջեից կատարվում են նպաստների բաշխում անապահով ընտանիքներին, որը մի փոքրիկ օգնություն է:

Ֆիզիկական կուլտուրայի դասերը կազմակերպվում են դպրոցի դասերի շրջանակներում: Որպեսզի դասերից դուրս կազմակերպվեն ֆիզիկական կուլտուրայի դասապրոցեսներ,անհրաժեշտ է համապատասխան մարզագույք,սարքավորումներ և մարզահագուստ:

Համայնքի տարածքում բնակարանային շինարարություն իրականացվել է 2015թ-ին՝ շահագործման են հանձնել Շիրակացու 5 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքը: Իսկ կոնկրետ գյուղացիների կողմից վերջին 20 տարիների ընթացքում չեն իրականացվել բնակարանային շինարարություն: Հիմնական պատճառներից մեկն էլ արտագաղթն է:

Համայնքում բարեկարգում և կանաչապատում չի իրականացվել: Կոմունալ ծառայության միջոցով իրականացվում է համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը:Այս աշխատանքներն իրականացվում են բացառապես համայնքապետարանի միջոցներով:

Գյուղը ք. Երևանից գտնվում է 80 կմ հեռավորության վրա: Գյուղի տրանսպորտային կապն իրականացվում է Ծաղկահովիտ-Գյումրի, Ծաղկահովիտ-Վանաձոր, Մանթաշ-Երևան, Հնաբերդ-Երևան երթուղինորով:

Պետության պաշտպանության հարցում ունենք զինվորներ,սպաներ,ովքեր անձնվիրաբար ծառայում են հայրենիքին:

Քաղպաշտպանություն գյուղում իրականացվում է, ունենք ապաստարան,որը գտնվում է դպրոցի նկուղային հարկում:

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Համայնքը տարածաշրջանի կենտրոնն է
- Կան տուրիզմի զարգացման հնարավորություններ
- Ունի մաքուր էկոլոգիա և բնական միջավայր
- Ամառվա և ձմեռվա հանգստի կազմակերպման լավ հնարավորություններ
- Կան արտադրական ձեռնարկություններ,որոնք հնարավոր է նորից վերագործարկել
- Կոմունալ հարմարությունների հիմքը դրված է
- Հնարավորություն կա որոշ չօգտագործվող շինություններ վերակառուցել վերամշակող ձեռնարկությունների
- Արոտավայրերը համայնքին մոտ են, բուսածածկույթը մերձալպյան է
- Արտադրվող մթերքների որակը բարձր է և էկոլոգիապես մաքուր են:

Համայնքի թույլ կողմերն են՝

- Ձմեռը երկար է և խիստ
- Ոռոգման և խմելու ջրի սակավությունը, ջրագծի անմխիթար վիճակը
- Հողերի կտրտվածությունը
- Ճանապարհների անբարեկարգ վիճակը
- Բնակարանային վատ պայմանները
- Սոցիալական չլուծվող հիմնախնդիրները և համայնքի բնակիչների տնտեսական վատ պայմանները
- Գյուղմթերքների իրացման դժվարությունները
- Համայնքապետարանին պատկանող գույքի վատ վիճակը:

Համայնքն ունի մեծ հնարավորություններ՝

- Իրականացնելու ընթացիկ և հեռանկարային ծրագրեր
- Ամրապնդելու ֆինանսական անկախությունը
- Զարգացնելու զբոսաշրջություն:

Համայնքին սպառնացող վտանգներն են՝

- Բնակչության աճող արտահոսքը
- Արտադրական և ինժեներական անձնակազմի մասնագիտական որակների կորուստ
- Կարկտահարություններ,երկրաշարժ և երաշտ:

Համայնքի ռազմավարական նպատակները որոշելիս հաշվի են առնվել իրականացվող միջոցառումների հրատապությունը, լուծման հնարավորությունները,դրանց իրատեսական լինելը,գյուղի զարգացման հանրապետական և մարզային ծրագրերի առկայությունը,ծրագրերի հիմնավորվածությունը և դրանց առաջնահերթությունը:

Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի հնգամյա զարգացման նպատակներն են՝

- Աջակցել գյուղացիական տնտեսություններին
- Ապահովել բնակավայրի նորմալ սանիտարական պայմանները
- Վերանորոգել ներհամայնքային ճանապարհները
- Վերանորոգել դաշտամիջյան ճանապարհները
- Վերանորոգել <<Ծաղկահովիտի>>ԲԿ-ն
- Համայնքում ստեղծել հացահատիկի մթերման կայան ամբողջ շրջանի մասշտաբով
- Համայնքում ստեղծել բրդի վերամշակման արտադրամաս
- Համայնքում ստեղծել կաշվի վերամշակման արտադրամաս

Բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը

Պատասխանատու՝ գյուղապետ

- Ուսումնասիրել սերմերի,պարարտանյութերի և տեխնիկայի նկատմամբ համայնքի պահանջը կազմել մատակարարման հնգամյա ծրագիր

  1-ին տարի 100 տնտ. համար

  2-րդ տարի 100 տնտ. համար

  3-րդ տարի 150 տնտ. համար

  4-րդ տարի 200 տնտ. համար

  5-րդ տարի 220 տնտ. համար:
- Յուրաքանչյուր տարի փետրվարին մարզպետարան ներկայացնել պահանջարկի հայտ
- Կապեր հաստատել հանրապետությունում պարարտանյութ և սերմեր ներկրող կազմակերպությունների և անհատների հետ, տալ նախնական պատվերներ
- Պայմանավորվել գյուղտեխնիկա ունեցող անձանց հետ աշխատանքի ծավալի, ժամկետների և վարձատրության կարգի մասին
- Կազմել աշխատանքների իրականացման նախահաշիվ և այն ներկայացնել համայնքի ներկայացուցիչների և ավագանիների քննարկմանը
- Ճշտել վերջնական պահանջը և կազմակերպել դրամահավաք
- Ապահովել պարարտանյութի և սերմնացուի ներկրումն ու բաժանումը բնակչության

- Կազմել գյուղ տեխնիկայի օգտագործման գրաֆիկ և հետևել դրա կատարմանը
- Կապ հաստատել պահեստամասեր ներկրող կազմակերպությունների հետ և կազմակերպել պահեստամասերի վաճառք
- Գնումների համար դիմել գյուղ փոխ օգնության բանկ մեքենատերերին վարկեր տրամադրելու համար
- Պայմանագիր կնքել մթերող կազմակերպությունների և անհատների հետ կենտրոնացված կարգով բրդի և կաթի մթերումներ իրականացնելու համար
- Քաղաքացիներից ընդունել վարկավորման հայտեր և ուսումնասիրել դրանք
- Հետևել վարկի ստացման և նպատակային օգտագործման ընթացքին

Համայնքում ստեղծել նորմալ սանիտարական պայմաններ

- Յուրաքանչյուր տարի ապրիլ և հոկտեմբեր ամիսներին համայնքում կազմակերպել սանիտարական մաքրման տասնօրյակներ
- Կազմել շաբաթօրյակների գրաֆիկ, նախահաշիվ, ներկայացնել համայնքի ներկայացուցիչներին և ավագանիներին
- Ճշտել անհրաժեշտ մեքենասարքավորումների քանակը և պահանջվող վառելիքի ծախսը, վառելիքը ձեռք բերել համայնքի բնակիչների և գյուղապետարանի միջոցներով
- Կառուցել պարզ տիպի աղբանոց և ամիսը մեկ անգամ կազմակերպել աղբահանություն համայնքի ուժերով

Վերանորոգել ներհամայնքային ճանապարհները

- Որոշել ճանապարհների բարեկարգման և նորոգման ձևը չափը
- Հաշվարկել անհրաժեշտ աշխատուժի պահանջարկը
- Ճշտել համայնքի կողմից պահանջվող ներդրման չափը և կազմակերպել դրամահավաք՝ վառելիք և անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար
- Ներկայացնել «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրերի հայտեր
- Աշխատանքներն սկսել ամեն տարի հունիսին

Պատասխատանու գյուղապետ

Վերանորոգել դաշտամիջյան ճանապարհները

- Ամեն տարի ուսումնասիրել ճանապարհների վիճակը և կազմել դրանց նորոգման գրաֆիկ, մշակել ճանապարհները նորոգելու եռամյա ծրագիր
- Կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց և ծախսերի նախահաշիվ

- Հաշվառել համայնքում եղած տեխնիկան և յուրաքանչյուրի համար կազմել անհատական աշխատանքի գրաֆիկ
- Յուրաքանչյուր բնակչի պարտավորեցնել մասնակցել դեպի սեփական հողամաս տանող ճանապարհների նորոգմանը, աշխատանքով և իրեն հասանելիք գումարի չափով
- Ճանապարհների հետագա շահագործման և ընթացիկ նորոգումների պարտականությունը դնել հողատերերի վրա

Պատասխատանու գյուղապետ

Գազաֆիկացնել գյուղի հարավ-արևմտյան մասը

- Պարզել գազաֆիկացվող բնակարանների քանակը
- Որոշել աշխատանքների դիմաց վճարումների կարգը և ձևը
- Հաշվարկել և անհրաժեշտ նյութերի և սարքավորումների քանակը
- Որոշել համայնքի ներդրման չափը և կազմակերպել դրամահավաք
- Ուսումնասիրել աշխատանքների իրականացման հնարավորությունները և կատարողի հետ կնքել նախնական համաձայնագիր
- Պայմանագրի և դրա իրականացման եղանակների մասին տեղեկացնել համայնքի բնակիչներին
- Բնակիչներից ստանալ նախնական հայտեր

Պատասխատանու գյուղապետ

Վերանորոգել <<Ծաղկահովիտի>> ԲԿ-ն

- Գտնել հիվանդանոցի վերանորոգման համար բարերար
- Պայմանավորվել Կառավարության հետ հիվանդանոցի անվանակոչման հարցում
- Գալիք տարում սկսել բուն շինարարական աշխատանքները
- Շինարարական աշխատանքներից հետո զինել բուժտեխնիկայով
- Կազմակերպել վերաբացում:

Համայնքում ստեղծել հացահատիկի մթերման կայան ամբողջ շրջանի մասշտաբով

- Ծաղկահովիտ համայնքում տրամադրել համապատասխան տարածք աշխատանքների իրականացման համար նախկին Գյուղտեխնիկայի տարածքից

- Տարածաշրջանի գյուղերի համայնքապետերի հետ կնքել պայմանագրեր բերքահավաքի ավարտին բերքի մատակարարման հետ կապված
- Վերադաս իշխանության հետ, ինչպես նաև գործարարների հետ պայմանավորվել մթերքի մատակարարման և վաճառքի հետ կապված:

Համանքում ստեղծել բրդի վերամշակման արտադրամաս

- Ծաղկահովիտ համայնքում տրամադրել համապատասխան տարածք աշխատանքների իրականացման համար
- Տարածաշրջանի գյուղերի համայնքապետերի հետ կնքել պայմանագրեր բրդի մթերման հետ կապված
- Վերադաս իշխանության հետ,ինչպես նաև գործարարների հետ պայմանավորվել բրդի հետագա մատակարարման և վաճառքի հետ կապված:

Համանքում ստեղծել կաշվի վերամշակման արտադրամաս

- Ծաղկահովիտ համայնքում տրամադրել համապատասխան տարածք աշխատանքների իրականացման համար
- Տարածաշրջանի գյուղերի համայնքապետերի հետ կնքել պայմանագրեր կաշվի մթերման հետ կապված
- Վերադաս իշխանության հետ,ինչպես նաև գործարարների հետ պայմանավորվել կաշվի հետագա մատակարարման և վաճառքի հետ կապված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 57-Ն

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

2016 թվականի համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի:

Կողմ -5 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

3. ԲԵՍԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

5. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված

Հաստատված է 22.12.2016թ.

Ծաղկահովիտ համայնքի ավագանու

թիվ 57-Ն որոշումով

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկտեմբեր ամսվա ծախսերը հոգալու համար բյուջեում կատարել փոփոխություններ՝

ավելացնել եկամուտները՝2190.000 /երկու միլիոն հարյուր իննսուն հազար/ դրամ

1. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված եկամուտներ - 1000000 /մեկ միլիոն / դրամ:
2. Այլ ոչ հարկային եկամուտներ - 790000 /յոթ հարյուր իննսուն հազար/ դրամ:
3. Պետ տուրք նոտարից -200000 /երկու հարյուր հազար/ դրամ
4. Պետ տուրք ՔԿԱԳ –ից – 200000 / երկու հարյուր հազար/ դրամ:

Ավելացնել ծախսեր 2190000 /Երկու միլիոն հարյուր իննսուն հազար/ դրամ

1. Ծաղկահովիտի համայնքապետարանի ապարատին /4111 հոդվածին 1217851 /մեկ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր հիսուն մեկ/ դրամ:
2. Ծաղկահովիտի մշակույթի տանը /4111 հոդվածին - 193221 մեկ հարյուր իննսուն երեք հազար երկու հազար երկու հարյուր քսան մեկ / դրամ:
3. Ծաղկահովիտի կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ին /4637 հոդվածին -437841 չորս հարյուր երեսուն յոթ հազար ութ հարյուր քառասուն մեկ / դրամ
4. Ծաղկահովիտի նախակրթարանին /4637 հոդվածին 341087 երեք հարյուր քառասուն մեկ հազար ութսուն յոթ/ դրամ:

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ